ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար մալուխների միացման կետի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/140 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 03.10.2023թ. կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/140-1 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի ապրիլի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «ՆՈՐԱԿ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի ապրիլի 16-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ապրանքի մատակարարման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2024 թվականի ապրիլի 16-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 03.10.2023թ. կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/140-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքի մատակարարման ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի մատակարարման ձեռքբերման համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**